ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ ՁԵՎ
(ՀԱՎԵԼՎԱԾ I)

Դրամաշնորհային մրցույթ

«Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում – Փուլ 2» ծրագրի շրջանակում

8900-2023-01 – Միջհամայնքային կամ անդրսահմանային համագործակցության տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների դրամաշնորհներ

Վերջնաժամկետը՝ **5-ը հունվարի, 2024թ.**

Ներածություն

Շնորհակալություն այս կարևոր ծրագրի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Ավստրիական զարգացման համագործակցության կողմից ֆինանսավորվող և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում – Փուլ 2» ծրագիրը նպատակ ունի աջակցելու եվրոպական չափանիշներին համապատասխան տեղական ինքնակառավարման վերանայված օրենսդրության ընդունմանը, որը կարտացոլի Հայաստանի նոր տարածքային-վարչական քարտեզը, ինչպես նաև զարգացնելու նոր խոշորացված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները՝ ապահովելով նրանց կողմից նոր պարտականությունների և իրավասությունների ստանձնումը: Այն նաև միտված է լավ կառավարման սկզբունքների մասին իրազեկության բարձրացմանը, ինչպես նաև անդրսահմանային համագործակցության (այսուհետ՝ ԱՍՀՀ), միջհամայնքային համագործակցության (այսուհետ՝ ՄՀՀ) և տեղական մակարդակում տնտեսական զարգացման խթանմանը:

Այս դրամաշնորհային մրցույթի ընդհանուր նպատակն է աջակցել **տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների մշակմանը միջհամայնքային** կամ **անդրսահմանային համագործակցության** ոլորտներում:

Այս դրամաշնորհային մրցույթը բաց է **Հայաստանի բոլոր 64 խոշորացված համայնքների** համար: Ընտրված համայնքները դրամաշնորհներ կստանան այն ծրագրերի համար, որոնք ուղղված են միջհամայնքային կամ անդրսահմանային համագործակցության շրջանակներում համատեղ ծառայությունների մատուցման նպատակով տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների իրականացմանը:

Ակնկալվում է, որ ֆինանսավորվող ցանկացած ծրագրի հիմքում ընկած կլինի տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, այսինքն, այն փաստացի տվյալները, որոնց օգնությամբ կապացուցեք, որ այն, ինչ առաջարկվում է ՄՀՀ կամ ԱՍՀՀ շրջանակներում, իրագործելի է՝ փաստաթղթավորված կարիքների կամ ժողովրդագրական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական և բնապահպանական ապացույցների այլ ձևերի հիման վրա:

Այն ծրագրերի առաջարկները, որոնք արդյունավետ և հստակ ձևով կհամապատասխանեն դրամաշնորհի չափանիշներին, կստանան դրամաշնորհ հետևյալ անվանակարգերում.

- Միջհամայնքային համագործակցության կոնկրետ ծրագրերի տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ՝ աջակցելու համատեղ ծառայությունների մատուցման միջհամայնքային ծրագրերի իրականացմանը:
- Անդրսահմանային համագործակցության կոնկրետ ծրագրերի տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ՝ աջակցելու, օրինակ, տնտեսական զարգացման կամ համօգտագործվող համայնքային ծառայությունների/ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացմանը:

Խոշորացված համայնքը կարող է դիմել դրամաշնորհի համար մեկ կամ երկու անվանակարգերում, սակայն յուրաքանչյուր անվանակարգի համար պետք է ներկայացվի առանձին դիմում-հայտի ամբողջական փաթեթ:

Ակնկալվում է, որ համայնքը ներդրում կկատարի դրամաշնորհի ընդհանուր գումարի առնվազը 10%-ի չափով:

Այս ծրագրի հիմքում է Լավագույն գործելակերպի ծրագրի (այսուհետ՝ ԼԳԾ) մեթոդաբանությունը, որը նպաստում է լավ փորձի հավաքագրմանը և համայնքներում դրա տարածմանը: Այն ենթադրում է համակարգված մոտեցում, որտեղ ընտրված ոլորտների լավագույն փորձը բացահայտվում, նշանավորվում և տարածվում է այլ համայնքներում:

ԼԳԾ-ի նպատակն է բացահայտել, հանրահռչակել և տարածել լավագույն գործելակերպը Հայաստանի խոշորացված համայնքներում՝ հետևյալ հատուկ նպատակներով.

- Զարգացնել տեղական իշխանությունների և տեղական շահագրգիռ կողմերի կարողությունները՝ մշակելու և իրականացնելու ծրագրերի առաջարկներ, որոնք խթանում են ներառական մասնակցություն և ապահովում քաղաքացիներին ծառայությունների բարելավված մատուցում.
- Բարձրացնել տեղական ինքնակառավարման նկատմամբ չափանիշները՝ բացահայտելով և ճանաչելով քաղաքացիական մասնակցության, թափանցիկ և բաց կառավարման, տեղական իշխանությունների և նրանց շահագրգիռ կողմերի հետ համագործակցության նորարարական և գերազանցության փորձը.
- Ճանաչել և պարգևատրել տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի առանցքային ոլորտներում լավագույն կատարողներին և օգնել տարածել այդ գործելակերպը, որից մյուս համայնքները կարող են դասեր քաղել:

Հայտատու համայնքները, ընտրվելու դեպքում, հաստատում են այլ համայնքների հետ իրենց լավագույն գործելակերպով կիսվելու պատրաստակամությունը: Այսպիսով, ԼԳԾ-ի շրջանակում ենթադրամաշնորհներ ստացող տեղական իշխանությունների վրա է դրվում իրենց լավագույն գործելակերպն այլ տեղական իշխանությունների համար վերապատրաստման գործիքի վերածելու պարտավորությունը՝ ամրապնդելով ծրագրերի կայունությունը և տեղական հանձնառությունը:

Դրամաշնորհների դիմում-հայտերի մանրազնին գնահատումը կիրականացնի Դրամաշնորհների գնահատման հանձնաժողովը (կազմված Եվրոպայի խորհրդի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՏԻՄ ներկայացնող միավորումներներից մեկի ներկայացուցիչներից)՝ ապահովելու, որ հավանությանն արժանանան լավագույն նախաձեռնությունները:

Դիմում-հայտերը կգնահատվեն հետևյալ չափանիշներով.

- որքանո՞վ է առաջարկվող ծրագիրը համապատասխանում *Դիմում-հայտերի ներկայացման հրավերի* նպատակին (40%).
- որքանո՞վ է առաջարկվող ծրագիրը համապատասխանում *Դիմում-հայտերի ներկայացման հրավերի* պահանջներին (30%).
- դիմում-հայտի և բյուջեի առաջարկի ճշգրտությունը, հստակությունը և ծախսարդյունավետությունը (20%).
- դրամաշնորհային ծրագրերի իրականացման նախկին փորձը (10%):

Կիրառվելիք ենթա-չափանիշները հետևյալն են.

- ապագա միջհամայնքային համագործակցության կամ անդրսահմանային համագործակցության ծրագրի համար առաջարկվող տեխնիկատնտեսական ուսումնասիրության *համապատասխանությունը* համայնքների կարիքներին.
- առաջարկվող տեխնիկատնտեսական ուսումնասիրության *մեթոդաբանությունը.*
- *համայնքային ներգրավվածությունը* (կանայք, երիտասարդներ, անապահով / աղքատության մեջ ապրող մարդիկ)՝ տեխնիկատնտեսական ուսումնասիրության ապացույցների հավաքագրման գործում.
- ապագա միջհամայնքային համագործակցության կամ անդրսահմանային համագործակցության ծրագրի *կայունության տարրերի / տնտեսական, բնապահպանական և սոցիալական ազդեցության* ներկայացում տեխնիկատնտեսական ուսումնասիրության մեջ.
- տրամադրվելիք դրամաշնորհային միջոցների ծախսման *արդյունավետությունը.*
- *հիմնավոր ֆինանսական առաջարկ՝ ներառյալ համաֆինանսավորման տարրը.*
- *դրամաշնորհային ծրագրերի իրականացման նախկին փորձը:*

Համայնքներին կտրամադրվի աջակցություն տեղական փորձագետի կողմից՝ կայուն ծրագրերի առաջարկների մշակման գործում:

Մենք իսկապես հուսով ենք, որ դուք կմասնակցեք այս ծրագրին, և անհամբեր սպասում ենք Ձեզ հետ համագործակցությանը:

ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ ՁԵՎԸ

Յուրաքանչյուր դաշտում լրացրե՛ք պահանջվող տեղեկատվությունը: Դաշտի չափը հարմարեցվում է մուտքագրված տեքստի ծավալին:

Բոլոր դաշտերը լրացնելուց հետո տպե՛ք Դիմում-հայտը, ստորագրե՛ք այն և ուղարկե՛ք այն *Դիմում-հայտերի ներկայացման հրավերի* պահանջներին համապատասխան:

Տեխնիկատնտեսական ուսումնասիրության դրամաշնորհների տեսակները	
Ներկայացված տարբերակներից ո՞րն է առավել ճշգրիտ նկարագրում այն, ինչ դուք առաջարկում եք իրականացնել տեխնիկատնտեսական ուսումնասիրություն այս դրամաշնորհի միջոցով: Նշե՛ք մեկ տարբերակ յուրաքանչյուր դիմում-հայտի համար:	►Մենք ցանկանում ենք իրականացնել տեխնիկատնտեսական ուսումնասիրություն՝ **միջհամայնքային համագործակցության** կոնկրետ ծրագրի շրջանակում ► Մենք ցանկանում ենք իրականացնել տեխնիկատնտեսական ուսումնասիրություն՝ **անդրսահմանային համագործակցության** կոնկրետ ծրագրի շրջանակում

1. Հայտատու համայնք	
Պաշտոնական անվանումը ►	
Իրավական տեսակը ►	
Գրանցման երկիրը ►	
Ամբողջական հասցեն ►	
Կայքէջը (առկայության դեպքում) ►	
Հիմնադրման տարեթիվը ►	
Դիմորդի անունից իրավաբանական պարտավորություններ ստանձնելու իրավասություն ունեցող անձի (անձանց) անունները և պաշտոնը (պաշտոնները) ►	

2. Կոնտակտային տվյալներ	
Կոնտակտային անձ ►	
Կոնտակտային անձի պաշտոնը ►	
Էլ. փոստ ►	
Հեռախոսահամար ►	

3. Բանկային տվյալներ	
Բանկի անվանումը ►	
Բանկի հասցեն ►	
Հաշվի սեփականատիրոջ անունը ►	
Հաշվեհամարը (ներառյալ բանկային կոդը) ►	
IBAN (կամ BIC Կոդը) ►	

4. Դրամաշնորհային ծրագրերի իրականացման նախկին փորձ

Խնդրում ենք ստորև նշել վերջին 3 (երեք) տարվա ընթացքում միջազգային կազմակերպություններից ստացված դրամաշնորհները *(եթե այդպիսիք կան):* Խնդրում ենք նշել իրականացված կամ իրականացման փուլում գտնվող յուրաքանչյուր դրամաշնորհային ծրագրի անվանումը, իրականացման տարին(երը), նպատակները և թիրախային խմբերը/շահառուները: ▼

5. Ծրագրի նկարագրություն *(առավելագույնը՝ 3 էջ)*

Խնդրում ենք ստորև նշել առաջարկվող տեխնիկատնտեսական ուսումնասիրության **նկարագրությունը և հիմնավորումը**: Ի՞նչ **խնդիր(ներ)** եք նախատեսում լուծել այս տեխնիկատնտեսական ուսումնասիրության միջոցով: **Ո՞ր համայնքների** համար: Եթե ձեր ծրագիրը նպատակ ունի ուսումնասիրելու մի շարք խնդիրներ, խնդրում ենք մանրամասնել դրանք բոլորը: Խնդրում ենք նշել առաջարկվող տեխնիկատնտեսական ուսումնասիրության **կարճաժամկետ ու երկարաժամկետ նպատակները**: Ծրագրի կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակները պետք է լինեն հասանելի և չափելի:

Քանի որ համագործակցային մոտեցումն օգնում է հասնել առավելագույն արդյունավետության, խնդրում ենք մատնանշել, թե ինչպես եք միասին՝ որպես **գործընկեր** համայնքներ, սահմանել այդ կարճաժամկետ ու երկարաժամկետ նպատակները:

Հնարավորության դեպքում, խնդրում ենք տրամադրել **ապացույցներ**, որ առաջարկվող տեխնիկատնտեսական ուսումնասիրությունն անհրաժեշտ է (օրինակ՝ վիճակագրություն, իրականացված հարցումների արդյունքներ, բնապահպանական տվյալներ, ծառայությունների տվյալներ և այլն): Եթե դուք այս պահին չունեք այս ապացույցները, բայց առաջարկում եք հավաքագրել դրանք տեխնիկատնտեսական ուսումնասիրության ընթացքում, խնդրում ենք նշել այն ապացույցների տեսակները, որոնք դուք մտադիր եք հավաքագրել: ▼

6. Առաջարկվող մեթոդաբանություն *(առավելագույնը՝ 1½ էջ)*

Խնդրում ենք նշել, թե հետազոտական ինչպիսի **մեթոդներ** եք նախատեսում կիրառել տեխնիկատնտեսական ուսումնասիրությունն իրականացնելու համար՝ ձեր նշած նպատակներին հասնելու համար՝ **տեխնիկական տեսանկյունից** (օրինակ՝ տնտեսական վերլուծություն, ծախս-օգուտ վերլուծություն, իրավական վերլուծություն, բնապահպանական վերլուծություն/գնահատում, համայնքի կարիքների գնահատում, տեխնիկական տվյալներ, տարածքներ այցելելը, հարևան ՏԻՄ-երի հետ կապ հաստատելը) և **քաղաքացիների ներգրավվածության տեսանկյունից** (օրինակ՝ քաղաքացիների հարցումներ, տվյալների ամբողջականացում, ֆոկուս խմբեր քաղաքացիների հետ, խորացված հարցազրույցներ փորձագետների հետ):

Այս պատասխանը պետք է ներառի համապատասխան տեղեկատվության հայտնաբերման և հավաքագրման համար առաջարկվող մեթոդների հիմնավորումը: ▼

7. Համայնքի ներգրավում *(առավելագույնը՝ 1 էջ)*

Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն իրականացնելիս **համայնքի ներգրավվածությունը**, ընդհանուր առմամբ, ուժեղացնում է համայնքի սեփականության զգացումը և արդյունքների վավերականությունը: Համայնքի բնակիչների հետ լայնածավալ խորհրդատվությունները կարող են բացահայտել ռեսուրսները կիսելու, գոյություն ունեցող ծառայությունը ընդլայնելու և նոր ծառայություններ ավելացնելու հնարավորությունները:

Խնդրում ենք ներառել տեղեկատվություն այն մասին, թե ինչպես եք քաղաքացիներին ներգրավելու տեխնիկատնտեսական ուսումնասիրության գործընթացում և որքան ներդրում կունենան համայնքները տեխնիկատնտեսական ուսումնասիրություն մեջ (հատկապես նկատի ունենալով կանանց, երիտասարդներին, անապահով / աղքատության մեջ ապրող մարդկանց): Ինչպե՞ս է համակարգվելու համայնքներում քաղաքացիների հետ խորհրդակցությունների գործընթացը: ▼

8. Ակնկալվող արդյունքները և ծրագրի կայունությունը (*առավելագույնը՝ 2 էջ*)

Խնդրում ենք ստորև նշել **ակնկալվող արդյունքները** և **արդյունքների կայունությունը** տեխնիկատնտեսական ուսումնասիրության ավարտից հետո: Ինչի՞ եք առաջարկում հասնել նախատեսվող տեխնիկատնտեսական ուսումնասիրության շնորհիվ: Արդյո՞ք տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը ներառելու է ռիսկերի գնահատում, սոցիալ-տնտեսական գնահատում, բնապահպանական գնահատում: Եթե այո, ապա ապագա ՄՀՀ կամ ԱՍՀՀ ծրագրի շրջանակում, համայնքների վրա **տնտեսական, բնապահպանական և սոցիալական ազդեցության** ո՞ր տարրերը կընդգրկվեն առաջարկվող տեխնիկատնտեսական ուսումնասիրության մեջ: Խնդրում ենք նշել, թե ինչպես եք չափելու ապագա ՄՀՀ կամ ԱՍՀՀ ծրագրի ազդեցությունը, որի համար դուք տեխնիկատնտեսական հիմնավորումներ եք հավաքագրում, հատկապես կանանց, երիտասարդների և անապահով / աղքատության մեջ ապրող մարդկանց վրա հավանական ազդեցության վերաբերյալ:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ ակնկալվում է, որ ապագա ՄՀՀ կամ ԱՍՀՀ ծրագիրը կբարձրացնի ներգրավված **բոլոր համայնքների** կայունության բոլոր երեք տարրերը: ▼

9. Հայտատուի մասնագիտական և գործառնական կարողությունները *(առավելագույնը՝ ½ էջ)*

Նշե՛ք, թե **համայնքապետարանի աշխատակազմի քանի՞ աշխատակից (մշտական և ժամանակավոր)** ներգրավված կլինի տեխնիկատնտեսական ուսումնասիրության աշխատանքներում:

Խնդրում ենք նկարագրել, թե ինչպես է իրականացվելու առաջարկվող տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը (ներառյալ ծառայություններ մատուցողների **ներգրավվածությունը**, որտեղ կիրառելի է): ▼

10. Համաֆինանսավորում *(առավելագույնը՝ ¼ էջ)*

Ստորև նշե՛ք, թե ինչպես եք մտադիր ապահովել ծրագրի համաֆինանսավորումը (համայնքի սեփական միջոցներով կամ երրորդ կողմերի ներդրմամբ): **Համաֆինանսավորումը** կարող է լինել ֆինանսական կամ մարդկային ռեսուրսների, բնաիրային ներդրումների կամ ծրագրի արդյունքում գոյացած եկամուտների տեսքով:
▼

11. Հայտարարագիր

Ստորագրելով այս դիմում-հայտը ես՝ ներքոստորագրյալս, լիազորված լինելով ներկայացնել Հայտատու համայնքը/Կոնսորցիումը, հաստատում եմ, որ սույն դիմում-հայտում պարունակվող տեղեկատվությունը ճիշտ է, և որ հայտատուն չի ստացել կամ չի դիմել Եվրոպայի խորհրդի որևէ այլ ֆինանսավորման սույն դրամաշնորհի դիմում-հայտի առարկա հանդիսացող գործողության իրականացման համար:

Ես նաև հավաստում եմ, որ հայտատուն, կամ իր սեփականատեր(եր)ը, կամ գործադիր պաշտոնյան/ները, չի/չեն գտնվում այնպիսի իրավիճակներից մեկում, որը կբացառեր նրա մասնակցությունն Եվրոպայի խորհրդի դրամաշնորհային ծրագրին: Համապատասխանաբար, հայտարարում եմ, որ հայտատուն.

ա. վերջնական դատավճռով չի դատապարտվել հետևյալ մեղադրանքներից մեկով կամ մի քանիսով՝ հանցավոր կազմակերպությանն անդամակցություն, կոռուպցիա, խարդախություն, փողերի լվացում, ահաբեկչության ֆինանսավորում, ահաբեկչական հանցագործություններ կամ ահաբեկչական գործունեություն, երեխաների աշխատանքի կամ մարդկանց առևտրի հետ կապված հանցագործություններ,

բ. չի գտնվում սնանկության, լուծարման, գործունեության դադարեցման, անվճարունակության կամ պարտատերերի հետ պայմանավորվածության կամ նմանատիպ կարգի այլ իրավիճակում,

գ. res judicata դրույթով վճիռ չի ստացել որևէ իրավախախտման վերաբերյալ, որը ազդում է նրա մասնագիտական բարեվարքության վրա կամ լուրջ մասնագիտական սխալ է հանդիսանում,

դ. կատարում է սոցիալական ապահովագրության վճարների, հարկերի և տուրքերի վճարման մասով ստանձնած իր պարտավորությունները՝ համաձայն երկրի կանոնադրական դրույթների.

ե. չի հանդիսանում հարկային, սոցիալական կամ այլ իրավական պարտավորությունները շրջանցելու համար ստեղծված սուբյեկտ (դատարկ կեղևային ընկերություն), և երբևէ չի ստեղծել կամ չի գտնվում այդպիսի կառույցի ստեղծման փուլում.

զ. ներգրավված չի եղել Եվրոպայի խորհրդի կամ պետական ֆինանսական միջոցների վատ կառավարման մեջ.

է. շահերի բախման իրավիճակում չէ և չի էլ կարող լինել:

12. Դրամաշնորհների արդյունքների հրապարակում

Եվրոպայի խորհուրդը տարեկան կտրվածքով դրամաշնորհների մասին տեղեկատվություն է հրապարակում իր կայքում (https://www.coe.int/en/web/portal/grants)՝ համաձայն 2015թ. դեկտեմբերի 16-ի թիվ 1374 Կանոնակարգի 2.1.4 հոդվածի (Եվրոպայի խորհրդի դրամաշնորհների տրամադրման կարգը): Խնդրում ենք ստորև նշել, թե արդյոք դրամաշնորհ ստանալու դեպքում հայտատուն առարկություններ ունի դրամաշնորհի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հետ կապված (Պայմանագրի անվանումը, պայմանագրի բնույթը և նպատակը, ստացողի անվանումն ու գտնվելու վայրը և պայմանագրի գումարը): Եթե այո, ապա նշե՛ք առարկության պատճառները: ▼

13. Ստորագրություն

Լրացրե՛ք այս աղյուսակը և ստորագրե՛ք վերջին դաշտում։

Ստորագրողի անուն, ազգանունը ►	
Ստորագրողի կոչումը կամ պաշտոնը հայտատու համայնքում ►	
Ստորագրման վայրը և ամսաթիվը ►	**Վայր՝** **Ամսաթիվ՝**
Հայտատու համայնքի ստորագրությունը և պաշտոնական կնիքը ►	